ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/108

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից 14.12.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/108 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 14.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 30.11.2018թ. հայտ է ներկայացրել նաև «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2018թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն: Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել ՀՀ ՊԵԿ պարզելու ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. կայացած նիստի թիվ 2.1 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ կոմիտեի կողմից ստացվել է եզրակացություն, որի համաձայն Ընկերությունը ունի 61 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Նույն արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և որոշում է կայացվել հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին փաստաթղթեր ներկայացնելու պահանջներ ներկայացնել:

Սակայն Ընկերությունը համաձայն չէ հանձնաժողովի վերը նշված որոշման և կոմիտեի եզրակացության հետ, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 30.11.2018թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի (այսուհետ՝ Քաղվածք) համաձայն՝ Ընկերությունը ընդհանրապես չի ունեցել հարկային պարտավորություններ:

Ընկերությունը, հիմք ընդունելով վերոհիշյալ Քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ

հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել Ընթացակարգին:

Սակայն ի զարմանս Ընկերության, պարզվել է, որ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է նաև, որ դրոշմանիշային վճարի մասով Քաղվածքի մեջ որևէ նշում չկար և Ընկերությունը չէր կարող տեղեկանալ կամ կանխատեսել, որ դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, քանի որ 2018թ. ընթացքում մասնակցելով բազմաթիվ մրցույթների նման խնդիր Ընկերության մոտ չի առաջացել: Եթե դրոշմանիշային վճարը համարվում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, ապա այս պարագայում ստացվում է, որ Ընկերությունը 2018թ. ընթացքում պետք է ունենար այդ պարտավորությունը և այն պետք է արտացոլված լիներ թե Քաղվածքի, թե Կոմիտեի կողմից տրված եզրակացությունների մեջ, սակայն մինչև Ընթացակարգը նման խնդիր չի առաջացել: Իսկ եթե կոմիտեի կողմից կատարվել է նման փոփոխություն, ապա այս պարագայում առնվազն առկա է իրազեկման խնդիր, որպեսզի մրցույթի մասնակիցները տեղեկացված լինեին և կատարեին համապատասխան վճարումները:

Բացի այդ, վերոհիշյալ խնդիրը պարզելու նպատակով, Ընկերությունը դիմել է ՀՀ ՊԵԿ և խնդրել է տալ տեղեկատվություն 30.11.2018թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ 14.12.2018թ. ստացվել է թիվ 2058 տեղեկանքը, համաձայն որի Ընկերությունը 30.11.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն, այդ ընդամենը 61 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարների գծով նախատեսված գումար:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 46-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, նույն հոդվածի 9-րդ մասը, 51-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետը, 43-րդ կետի 3-րդ ենթակետը, 44-րդ և 45-րդ կետերը:

Ընկերությունը գտնում է, որ բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ մեկուսացվելով պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Ընկերությունը գտնում է, որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ իրականում չի ունեցել, քանի որ ինչպես արդեն նշվել է Ընկերությունը հիմք է ընդունել Քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել Ընթացակարգին, տեղեկացված կամ իրազեկված չլինելով, որ կոմիտեն դրոշմանիշային վճարներն այսուհետ հաշվարկում է որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ և այդ պարտավորությունները չկատարելը կարող է դիտարկվել որպես ժամկետանց հարկային պարտավորություն, ինչն էլ հիմք է հանդիսացել Ընկերության հայտը մերժելու համար:

Բացի այդ Ընկերությունը հայտնել է նաև, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց կողմից կայացվել են նմանատիպ որոշումներ դրոշմանիշային վճարների մասով հարկային մարմնի կողմից ժամկետանց հարկային պարտավորություններ արձանագրելու մասով:

Ընկերությունը բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 12.12.2018թ. նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշումները:

«Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2018թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 19.12.2018թ. թիվ ԳԳ/7564-18 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև հայտնել հետևյալը.

«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ էր զբաղեցրել «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույթին համապատասխան՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացվել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով:

Կարգի 44-րդ կետին համապատասխան՝ կոմիտեի կողմից ստացվել է հարցման մասին տեղեկատվություն, որի արդյունքում պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն, ունի 61000 (վաթսունմեկ հազար) ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Համաձայն կարգի 47-րդ կետի՝ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է ծանուցում՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն վերջինս չի ներկայացրել շտկված որևէ

փաստաթուղթ, ինչպես նաև կոմիտեից ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեն նոր տեղեկատվություն չի ստացել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Բողոքին կից ներկայացված փաստաթղթերում արտացոլվում է, որ վերոգրյալ 61 000 ՀՀ դրամ պարտքը դրոշմանիշային վճար է, որը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեին տրամադրված տեղեկատվությամբ հանդիսանում է որպես ժամկետանց պարտավորություն, սակայն քանի որ բացվածքով չի երևում, թե պարտքն ինչի հետևանքով է առաջացել, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 19.12.2018թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>3. ԳԲԽ-ԱՄ-2018/108 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/108 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն 30.11.2018թ. հայտ է ներկայացրել:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 61 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի 14.12.2018թ. բողոքը, ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի 19.12.2018թ. թիվ ԳԳ/7564-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային

առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն 30.11.2018թ. հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 30.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 06.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 61 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի հայտը գնահատվել է անբավարար:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 30.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 30.11.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միևնույն ժամանակ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ -ն բողոքին կից ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 2 բաժնի կողմից 14.12.2018թ. տրված թիվ 2058 տեղեկանքը, համաձայն որի 30.11.2018թ. դրությամբ Ընկերության մոտ արձանագրված 61 000 ՀՀ դրամի պարտավորությունը դրոշմանիշային վճարի գծով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.12.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որի չափը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, ուստի առաջնորդվելով Կարգի 44-րդ կետով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը անբավարար է գնահատել և մերժել Ընկերության հայտը:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն, ուսումնասիրելով 30.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում է, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 30.11.2018թ. (հայտը ներկայացնելու օր) դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Սույն հանգամանքը հաշվի առնելով գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ա ԸՆԴ Ա ԱՎՏՈՀԱՈՒՍ» ՓԲԸ-ի կողմից 14.12.2018թ. ներկայացված բողոքը բավարարել և պարտավորեցնել ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտեի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 12.12.2018թ. նիստի թիվ 2.1 արձանագրությամբ կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**